ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարմանն ուղղված ծրագրերի համակարգման հարթակի քարտուղարություն՝
Հասցե՝ Հայաստան, 0070, Երևան, Այգեստան թաղամաս, 5-րդ փողոց, 3/1 տուն
Հեռ՝ (+37410) 517528; **Էլ. հասցե՝** hartak@sdaoffice.am

ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարմանն ուղղված ծրագրերի համակարգման հարթակի 4-րդ աշխատաժողովի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի ապրիլի 30-ին, տեղի ունեցավ ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարմանն ուղղված ծրագրերի համակարգման հարթակի (այսուհետ՝ Հարթակ) 4-րդ աշխատաժողովը՝ «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոնում *(Հասցե՝«Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն, ՀՀ, Երևան, Մ. Խորենացու փող., 15.)*:

Աշխատաժողովի օրակարգը՝

09:30-10:00	Մասնակիցների ժամանում, գրանցում, սուրճ
10:00-10:10	Ողջույնի խոսք ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
10:10-10:15	Օրակարգի ներկայացում Նոր գործընկեր կազմակերպության հուշագրի հանձնում *Գ. Թովմասյան՝ Ռազմավարական զարգացման գործակալություն ՀԿ*
10:15-10:55	ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարման հայեցակարգի մշակման՝ խնդիրների գույքագրման և վերլուծության ուղղությամբ կատարված աշխատանքների ներկայացում: *Ներկայացնող՝ Վիկտորիա Այվազյան ՌԶԳ ՀԿ* Քննարկում, հարց ու պատասխան
10:55-11:10	ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների

	կայուն կառավարման հայեցակարգի մշակման աշխատանքային խմբի հաստատում: *Ներկայացնող՝ Աստղիկ Դանիելյան ԳՄՀԸ* Քննարկում, հարց ու պատասխան
11:10-11:40	Սուրճի ընդմիջում
11:40-12:10	Դեգրադացված անտառային և անտառամերձ համայնքների արոտների բարելավման և վերականգման աշխատանքների ընթացքի ներկայացում *Ներկայացնող՝ Հովիկ Սայադյան Միավորված Ազգերի Զարգացման ծրագիր* Հարց ու պատասխան
12:10-12:40	Մարզպետարանների և համայնքների ներկայացուցիչների կողմից արոտների երկզոնային կառավարմանը խոչընդոտող խնդիրների և դրանց հաղթահարմանն ուղղված անհրաժեշտ միջոցառումների ներկայացում *Ներկայացնող՝ Գագիկ Խաչատրյան Սյունիքի մարզպետարան* Քննարկում, առաջարկություններ, հարց ու պատասխան
12:40-13:00	Միջոցառման ամփոփում *Կարեն Թորոսյան CARMAC II*

Հանդիպման մասնակիցները՝

1. Ռուդիկ Նազարյան- ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն
2. Արթուր Բաղդասարյան- ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն
3. Քրիստինա Խանոյան - ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն
4. Հռիփսիմե Բաբայան- ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման

նախարարության
5. Ոսկեհատ Գրիգորյան- ՀՀ Բնապահպանության նախարարություն
6. Գայանե Նիկողոսյան- ՀՀ Բնապահպանության նախարարություն
7. Աշոտ Հարությունյան-ՀՀ ԱԺ Տարածքային կառավարման տեղական ինքնակառավարման գյուղատնտեսության և բնապահպանության հարցերի մշտական հանձնաժողով
8. Տաթև Եղիազարյան – ՀՀ Տարածքային զարգացման հիմնադրամ
9. Նորա Ալանակյան- Ավստրիայի զարգացման գործակալություն
10. Հովիկ Սայադյան- Միավորված Ազգերի Զարգացման ծրագիր
11. Արման Օհանյան- Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն (CARD) հիմնադրամ
12. Վարդան Ուռուտյան- ՀՀ Ազգային Ագրարային համալսարան
13. Անդրեաս Մելիքյան- ՀՀ Ազգային Ագրարային համալսարան
14. Աիդա Իսկոյան- ԵՊՀ Իրավաբանական ֆակուլտետ, էկոլոգիական իրավունքի կենտրոն
15. Լիանա Ներսիսյան- Հանուն Կայուն Զարգացման Հայկական Ասոցիացիա
16. Գագիկ Խաչատրյան- Սյունիքի մարզպետարան
17. Ներսես Շադունց-ՀՀ Սյունիքի մարզ, Տեղ համայնք
18. Արտյոմ Գրիգորյան- ՀՀ Սյունիքի մարզ, Գորայք համայնք
19. Արմեն Խաչատրյան-ՀՀ Սյունիքի մարզ, Սիսիան համայնք
20. Արմեն Ավիտիսյան- ՀՀ Սյունիքի մարզ, Գորիս համայնք
21. Աստղիկ Դանիելյան- Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն
22. Իրինա Բալասյան- Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն
23. Մուշեղ Մկրտչյան- Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն
24. Քարոլին Վագներ- Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն
25. Սամվել Հովհաննիսյան- Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն
26. Կարեն Թորոսյան- Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամ
27. Մկրտիչ Այվազյան - Ռազմավարական զարգացման գործակալություն
28. Գագիկ Թովմասյան- Ռազմավարական զարգացման գործակալություն, ՀԱԱՀ
29. Աննա Պողոսյան- Ռազմավարական զարգացման գործակալություն
30. Վարդան Թոռչյան- Ռազմավարական զարգացման գործակալություն
31. Վիկտորիա Այվազյան- Խորհրդատու

Աշխատաժողովին մասնակցեցին ՀՀ գյուղատնտեսության, տարածքային կառավարման և զարգացման, ինչպես նաև բնապահպանության նախարարությունների, ոլորտում գործող միջազգային, հասարակական և գիտական հաստատությունների ներկայացուցիչներ:

Չորրորդ աշխատաժողովի ընթացքում՝

- Ներկայացվեց հարթակի նոր գործընկեր կազմակերպությունը՝ ՀՀ Ազգային Ագրարային համալսարանը
- Ներկայացվեց ու քննարկվեց ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարման հայեցակարգի մշակման՝ խնդիրների գույքագրման և վերլուծության ուղղությամբ կատարված աշխատանքը
- Հիմք դրվեց վերոնշյալ հայեցակարգի մշակման համար անհրաժեշտ աշխատանքային խմբի ձևավորմանը
- Գործընկեր կազմակերպության՝ ՄԱԶԾ-ի «Հողերի եւ անտառների կայուն կառավարում» ծրագրի ղեկավար Հովիկ Սայադյանը ներկայացրեց ծրագրային միջամտության շրջանակներում կատարված դեգրադացված անտառային և անտառամերձ համայնքների արոտների բարելավման և վերականգման աշխատանքների ընթացքը
- Քննարկվեցին մարզպետարանների և համայնքների ներկայացուցիչների կողմից հնչեցված արոտների երկզոնային կառավարմանը խոչընդոտող խնդիրները, ներկայացվեցին դրանց հաղթահարմանն ուղղված անհրաժեշտ միջոցառումները, ինչպես նաև Սյունիքի մարզի Սիսիանի տարածաշրջանի հեռագնա արոտներ Գորիսի տարածաշրջանից նախիրների և հոտերի սեզոնային տեղափոխման համար նախրաքաշերի ձևավորման նոր ճանապարհային երթուղու քարտեզագրման անհրաժեշտությունը, արոտօգտագործման շրջանում միջպետական մայրուղու կենդանիներով ծանրաբեռնվածության խնդիրը:

Հասցե՝ Հայաստան, 0070, Երևան, Այգեստան թաղամաս, 5-րդ փողոց, 3/1 տուն
Հեռ՝ (+37410) 517528; **Էլ. հասցե՝** hartak@sdaoffice.am

Բացման խոսքով հանդես եկավ Գ. Թովմասյանը՝ ներկայացնելով աշխատաժողովի ընթացքը, քննարկվող խնդիրները, նոր գործընկերներ կազմակերպությանը և բանախոսների ներկայացումները, ըստ հերթականության:

Նոր գործընկեր կազմակերպությունը՝ ՀՀ Ազգային Ագրարային համալսարանը պաշտոնապես ներկայացվեց և նրան հանձնվեց Հարթակին միանալու Հուշագրի օրինակը:

Գործընկեր կազմակերպության ներկայացուցիչ՝ Վարդան Ուռուտյանը շնորհակալություն հայտնեց Հարթակին միանալու հնարավորության ընձեռման համար, հավելելով, որ հնարավոր կլինի հասնել ոլորտում շոշափելի արդյունքների համատեղ ջանքերի համադրման շնորհիվ:

ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարմանն ուղղված ծրագրերի համակարգման հարթակի քարտուղարություն՝
Հասցե՝ Հայաստան, 0070, Երևան, Այգեստան թաղամաս, 5-րդ փողոց, 3/1 տուն
Հեռ՝ (+37410) 517528; **Էլ. հասցե՝** hartak@sdaoffice.am

Ողջույնի խոսքից հետո ներկայացվեցին՝ ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարման հայեցակարգի մշակման՝ խնդիրների գույքագրման և վերլուծության ուղղությամբ կատարված աշխատանքները, հայեցակարգի մշակման համար անհրաժեշտ աշխատանքային խմբերի ձևավորման տրամաբանությունը: Գործընկեր կազմակերպության՝ ՄԱԶԾ-ի «Հողերի եւ անտառների կայուն կառավարում» ծրագրի ղեկավար Հովիկ Սայադյանը ներկայացրեց ծրագրային միջամտության շրջանակներում

Հասցե՝ Հայաստան, 0070, Երևան, Այգեստան թաղամաս, 5-րդ փողոց, 3/1 տուն
Հեռ՝ (+37410) 517528; **Էլ. հասցե՝** hartak@sdaoffice.am

կատարված դեգրադացված անտառային և անտառամերձ համայնքների արոտների բարելավման և վերականգման աշխատանքների ընթացքը:

Մարզպետարանների և համայնքների ներկայացուցիչների կողմից խնդիր բարձրացվեց Գորիսի տարածաշրջանից Սիսիանի տարածաշրջանի հեռագնա արոտներ գյուղ. կենդանիների սեզոնային տեղափոխման համար ճանապարհային նոր երթուղու /նախրաքաշի/ ուսումնասիրության անցկացում, հեռագնա արոտավայրեր կենդանիների տեղափոխումը կատարել ոչ թե միջպետական մայրուղով, այլ մայրուղուն հարակից գյուղական համայնքների արոտային տարածքներով: Այդ իրականացնելու համար անհրաժեշտ է մշակել կենդանիների տեղաշարժման համար նոր ճանապարհային քարտեզ, ապահովել անհրաժեշտ ենթակառուցվածքներով՝ կացարան, մակատեղի, ջրելախմոց և այլն: Դա թույլ կտա ոչ միայն ազատ պահել հիմնական մայրուղին, այլ նաև բացառել կենդանիների ավտովթարի ենթարկվելը և այլ խնդիրների հաղթահարումը:

Առաջարկ արվեց արոտ ուղարկվող կենդանիների համար կառուցել անցակետ, որպեսզի հնարավոր լինի հասկանալ, թե կոնկրետ, որ տարածքով են անցնում կենդանիները և դրանց քանակը, ինչպես նաև հաշվարկել այն վնասը, որը պատճառվում է միջանկյալ համայնքին, որի արոտներով անցնում է հոտը:

Յուրաքանչյուր ներկայացում ուղեկցվում էր հարցերի և առաջարկությունների համար նախատեսված ժամանակահատվածով:

Հասցե՝ Հայաստան, 0070, Երևան, Այգեստան թաղամաս, 5-րդ փողոց, 3/1 տուն
Հեռ՝ (+37410) 517528; **Էլ. հասցե՝** hartak@sdaoffice.am

Իրենց հարցերով և առաջարկություններով հանդես եկան միջոցառմանը մասնակցող պետական, միջազգային, հասարակական և գիտական հաստատությունների ներկայացուցիչներ:

Հանդիպման արդյունքում արոտների կայուն կառավարման գործընթացի շահագրգիռ կողմերը համաձայնության եկան ի գիտություն ընդունել և հանդիպման ընթացքում վերհանված առաջարկությունները և ձեռք բերված համաձայնությունները:.

Հասցե՝ Հայաստան, 0070, Երևան, Այգեստան թաղամաս, 5-րդ փողոց, 3/1 տուն
Հեռ՝ (+37410) 517528; **Էլ. հասցե՝** hartak@sdaoffice.am

Առաջարկություններ և հանձնարարականներ, եզրակացություններ.

Թեմա	**Առաջարկություններ և ձեռք բերված համաձայնություններ, եզրակացություններ**
ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարման	ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարման հայեցակարգի մշակման աշխատանքային խմբի ձևաչափի

հայեցակարգի մշակում:	հաստատում՝ համաձայն դրա նամակների ուղարկում խմբի ձևավորման համար:
Դեգրադացված անտառային և անտառամերձ համայնքների արոտների բարելավման և վերականգման աշխատանքների ընթացքի ներկայացում	Առաջարկ արվեց արոտների բարելավման և վերականգման աշխատանքներ իրականացնելիս հաշվի առնել ՀՀ լանդշավտային գոտիներին բնորոշ խոտաբույսերի տեսակների առկայությունը և ենթացանքի համար օգտագործվող խոտախառնուրդներում որպես բաղադրատարեր նախապատվությունը տալ այդ տեսակների ընտրությանը: Զգուշորեն ընտրել Հայաստան ներկրվող սերմերը և մեծ ուշադրություն հատկացնել խոտախառնուրդների բաղադրությունը սահմանելուն: Նպաստել և աջակցել տեղական սերմնարտադրության զարգացմանը՝ քանի որ այս հարցի կարևորությանը անրադարձ էր կատարվել նաև նախորդ հանդիպման ընթացքում և կարևոր քննարկում ծավալվեց, համաձայնեցվեց մոտակա հանդիպումներից մեկում մանրամասն անրադառնալ այս ոլորտին:
Մարզպետարանների և համայնքների ներկայացուցիչների կողմից արոտների երկզոնային կառավարմանը խոչընդոտող խնդիրների և դրանց հաղթահարմանն ուղղված անհրաժեշտ միջոցառումների ներկայացում	Կարևորվեց խնդիրը և համաձայնեցվեց, որ Պլատֆորմի անդամների կողմից կքքնարկվի հնարավոր աջակցության հարցը

Հանդիպման վերջում, Կ. Թորոսյանը ամփոփեց արդյունքներն ու հետագա քայլերը և շնորհակալություն հայտնեց բոլոր մասնակիցներին աշխատաժողովին մասնակցելու և

ակտիվ քննարկման համար:

Համակարգման հարթակի չորրորդ աշխատաժողովի վերաբերյալ անդրադարձ է հրապարակվել ՀՀ Գյուղատնտեսության նախարարության պաշտոնական էջում՝ **https://bit.ly/2V9Jb6o** և ՀՀ Ազգային Ագրարային համալսարանի կայք էջում՝ **https://bit.ly/2Yl1t6K**: